ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՏԱԹԵՒԿ ՀԱՐԹԵՆՅԱՆ
ԵԳՊԱ դասախոս
Գյումրու մասնաճյուղ

«Արա Սարգսյանը հայ արդի կերոպարվեստի սյուներից է: Արվեստագիտական կրթությունը նա ձեռք է բերել Եվրոպայում եւ դեռ երիտասարդ, ստեղծագործական ավյունով լի եւ անսահման խանդավառությամբ՝ եկավ Հայաստան ու իր ամբողջ էությամբ ձուլվեց մայր երկրին, աղրեց նրա նոր օրերի հեւքով: Առաջին իսկ տարիներին հայրենիքում ստեղծած նրա մի շարք կոթող-հուշարձանները, ինչպես նաեւ բոլոր լավագույն գործերը, ներծծված են մեր ժողովրդի վերածննդյան ոգով ու աղագային նայող խոր հավատով:
Արա Սարգսյանն իր բազմաբովանդակ գործունեությամբ անբաժան է հայ ժողովրդի ու նրա մշակույթի պատմությունից»:

Մարտիրոս Սարյան

1920-ականները Խորհրդային Հայաստանում հագեցած էին հասարակական, քաղաքական եւ մշակութային նշանակալից իրադարձություններով: Հատկապես մշակութային կյանքում զգալի փոփոխություններ տեղի ունեցան, որոնք հետք թողեցին հետագա տարիների հայ մշակույթի զարգացման վրա: Կերոպարվեստի, գրականության, կինոյի, թատրոնի, երաժշտության ու ճարտարապետության ասպարեզներում վերելքի այս շրջանը կապված էր մի շարք նշանավոր արվեստի գործիչների գործունեության ու հայ մշակույթին անմնացորդ նվիրման իրողության հետ: Հատկապես նշանակալից էր հայրենիքի վերելքով մտահոգ այնպիսի արվեստագետների վերադարձը Հայաստան, ինչպիսիք էին Մարտիրոս Սարյանը, Փանոս Թերլեմեզյանը, Ստեփան Աղաջանյանը, Սեդրակ Առաքելյանը եւ Սուրեն Ստեփանյանը:

Այս արվեստագետների թվում էր նաեւ Արա Սարգսյանը, ով 1925 թ. Վիեննայից գալով Սովետական Հայաստան՝ իր հետ բերեց նաեւ մասնագիտական հիմնավոր գիտելիքներ եւ մոնումենտալ քանդակի, դիմաքանդակի, զարդաքանդակի ու թատերական նկարչության բնագավառներում մի շարք նորարարությունների հեղինակ հանդիսացավ: Լինելով բազմակողմանի զարգացած արվեստագետ՝ նա զգալի ներդրում ունեցավ նաեւ արվեստաբանության, քննադատության, քաղաքաշինության, թատերական արվեստի ձեւավորման բնագավառներում: ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ Գեղարվեստական ակադեմիայի իսկական անդամ, Հայ կերոպարվեստագետների միության առաջին ղեկավար, քանդակագործ Արա Սարգսյանի ստեղծագործական ուղին դիտարկելիս՝ մեծ ուշադրության է արժանի նաեւ այն կարեւորագույն ներդրումը, որ վերջինս ունեցել է մանկավարժության ասպարեզում:

Մինչեւ Հայաստան տեղափոխվելը՝ Արա Սարգսյանն աղրել եւ կրթություն էր ստացել Կ.Պոլսում եւ Վիեննայում, ճանաղարհորդել էր ողջ Եվրողայով, ծանոթացել համաշխարհային արվեստի գլուխգործոցներին, տիրաղետում էր մի շարք օտար լեզուների: Վերադառնալով Հայաստան, թեեւ երիտասարդ տարիքին՝ կարճ ընթացքում արժանանում է ժամանակի մտավորականության հարգանքին ու գնահատանքին:

Որղես քանդակագործ շատ արագ ժողովրդականություն գտնելով՝ Արա Սարգսյանն ուշադրությունը սեւեռում է նաեւ երիտասարդ սերնդի կրթության խնդրին եւ մանկավարժության ասղարեզում իր գիտելիքների ու փորձի ներդրման կարեւորագույն գործին: Դա արտահայտվում է այն երկարամյա բեղմնավոր գործունեությամբ, որ վերջինս վարել է որղես Հայաստանի նկարիչների միության ղեկավար, կերղարվեստի ուսումնարանի դասախոս եւ հատկաղես 1945թ. Երեւանի գեղարվեստի ղետական ինստիտուտի հիմնադիր, ռեկտոր ու քանդակագործության ամբիոնի առաջին վարիչ:

1940-ական թվականների սկզբին Արա Սարգսյանը Մարտիրոս Սարյանին ուղղված նամակներում հաճախ էր շոշափում Երեւանում գեղարվեստի բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծման գաղափարը՝ խոսելով այդ կարեւորագույն կրթական հաստատության դերի եւ դրա իրականացման ուղիների մասին[1]: Ի վերջո, չնայած Հայրենական ղատերազմի ավարտից հետո երկրում կային բազմաթիվ խնդիրներ, բայց 1944-ի գարնանը Արա Սարգսյանը եւ Մարտիրոս Սարյանը բազմաթիվ փորձերից հետո ստանում են ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից բարձրագույն դղրոցների համամիութենական կոմիտեի համաձայնությունը՝ Գեղարվեստի ինստիտուտ բացելու մասին: Իսկ 1945 թվականի հունիսի 28-ին ստանում են Հայաստանի կոմկուսի Կենտկոմի եւ Ժողկոմխորհի հրամանը:

« *Հայ ժողովրդի ղատմության մեջ առաջին անգամ այդ երազը իրականանում է:… Սա ղատմություն է*»,- 1944 թվականի հունիսի 10-ին Մարտիրոս Սարյանին ուղղված նամակում գրում է Արա Սարգսյանը[2]:

Արա Սարգսյանը՝ որղես ինստիտուտի առաջին ռեկտոր, մնում է մինչեւ 1959 թվականը՝ հիմք դնելով հայ առաջին գեղարվեստական կրթության բարձրագույն կրթական համակարգին: Նա նաեւ սկիզբ դրեց քանդակագործ-արվեստագետներ ղատրաստելու մեծ ու կարեւոր գործին եւ մինչեւ իր կյանքի վերջը ղեկավարեց Երեւանի գեղարվեստի ղետական ինստիտուտի քանդակագործության ամբիոնը:

Ականավոր քանդակագործի մասին 1960-1990-ականների արվեստի ղարբերականներում եւ մամուլում առկա բազում հոդվածների ու աշխատությունների շարքում մեծ տեղ են զբաղեցնում բազմաթիվ հուշերն ու գրառումները, որոնք

վերաբերում են նրա՝ որպես մանկավարժի վարած գործունեությանը ու հատկապես երիտասարդության հանդեպ ունեցած առանձնահատուկ հոգատարությանը: Ստեղծագործական, հասարակական ու մանկավարժական բուռն գործունեությամբ հանդերձ՝ Արա Սարգսյանը միշտ ժամանակ եւ հատուկ ուշադրություն է տրամադրել երիտասարդներին կրթելու, աջակցելու եւ հնարավորինս սատարելու շնորհակալ գործին: Ինչպես նշում են ժամանակակիցները, նա «*հայ քանդակագործների մի ամբողջ դպրոց ստեղծեց: Նախ կերպարվեստի ուսումնարանում, իսկ առա՝ Գեղարվեստական ինստիտուտում Արա Սարգսյանը մեծ արվեստի ուղեգիր տվեց քանդակագործների մի ստվար ջոկատի, որն այսօր վճռող խոսք է ասում մեր արվեստի այդ մարզում: Արա Սարգսյանը նրանց ներշնչում էր հավատարմություն ճշմարիտ արվեստի օրենքներին, հավատ ու սեր մարդու հանդեպ, ժամանակի տաք հետքերով գնալու, ժողովրդի հետ աղրելու, նրա հետ հրճվելու, պայքարելու, խորհելու, ազնիվ ու շիտակ վերաբերմունք արվեստի նկատմամբ*»[3]:

Նրա մանկավարժական գործունեության մասին այսօր կարող են վկայել նրա հետեւորդներն ու արվեստի ժառանգորդները: Ինչպես հիշում են ուսանողները, երիտասարդ արվեստագետների տաղանդը բացահայտելու եւ ուղղորդելու մանկավարժական պրակտիկան Սարգսյանի մոտ զուգորդված է եղել «*մարդկային-հումանիստական էությամբ, տաղանդի նկատմամբ ուշադրության եւ հոգատարության բացառիկ դրսեւորումներով*»[4]: Լինելով իսկական մանկավարժ եւ ունենալով կազմակերպչական բացառիկ հմտություն՝ նա ինստիտուտը դրեց ամուր հիմքերի վրա, որի նպատակը արվեստի դասավանդման հստակ մեթոդի մշակումն ու կիրառումն էր:

Արվեստագետի մարդկային բարձր անհատականության ու, ինչպես նշում է Նաիրի Զարյանը, «առասպելական չափերի հասնող բարության»[5] վերաբերյալ բազմաթիվ պատմություններ ու հուշեր են պահպանվել: Նրա անհատականության այդ որակները հատկապես ցայտուն էին դրսեւորվում ուսանողների հանդեպ ցուցաբերած վերաբերմունքում: Միշտ բարյացակամ էր, օգնող, ընդառաջող, չէր մերժում ուսանողների խնդրանքը եւ նույնիսկ ֆինանսական աջակցություն էր ցույց տալիս ոչ միայն ինստիտուտի, այլեւ սեփական միջոցներից:

Իր հոդվածներից մեկում Զարյանը պատմում է մի դեպքի մասին, երբ գեղարվեստական ինստիտուտի ուսանող Հովհաննես Շարամբեյանը լուրջ հիվանդ է լինում, եւ նրան անհրաժեշտ է լինում երկարատեւ բուժում ստանալ Դիլիջանի առողջարանում: Արա Սարգսյանը ոչ միայն իր սեփական մեքենայով տանում է ուսանողին, այլեւ մի քանի ամսվա ուղեգիր է գնում նրա համար[6]: Համանման մի պատմություն էլ կապված է Մհեր Մկրտչյանի հետ:

Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանի վկա-

յությամբ՝ այսօր հազիվ թե գտնվի Ա. Սարգսյանի սերնդակից, միջին կամ երիտասարդ սերնդի մի արվեստագետ, որ զգացած չլինի նրա անմիջական օգնությունը, բարերար ազդեցությունը[7]:

1968 թ. «Սովետական Հայաստան» ամսագրի համարներից մեկում Արա Սարգսյանը մտահոգություն է հայտնում երիտասարդ սերնդի՝ լավ ուսման ու կրթության համար նպաստավոր պայմաններ առահովելու մասին: Օրինակ բերելով Մոսկվայի կենտրոնական ցուցասրահներից մեկում՝ Մանեժում բացված արհեստագործական ուսումնարանների աշխատանքների համամիութենական ցուցահանդեսը, որին մասնակցում էր նաեւ Երեւանի թիվ 8 գեղարվեստատեխնիկական ուսումնարանը՝ Արա Սարգսյանը մեծ գոհունակությամբ է նշում արդեն երկու տարի գործող երիտասարդ ուսումնարանի ուսանողների ու դասախոսների կատարած աշխատանքը: Քննարկելով այն թերի կետերը, որ դեռ պետք է լրացնել առակու կամ ոսկրի գեղարվեստական մշակման գործում, ներկայացնելով արծաթի փորագրության, փայտի ու քարի գեղարվեստական մշակման գծով արված աշխատանքները՝ Արա Սարգսյանն ընդգծում է գեղար-

վեստական արտադրության նոր օբյեկտներ՝ գործարաններ, արվեստանոցներ բացելու կարեւորությունը եւ հատկապես գեղարվեստական ուսումնարանին արտադրական լավագույն ու տեխնիկապես հարուստ սարքավորումներով հագեցած արհեստանոցներ, արվեստանոցներ, էքսպերիմենտալ լաբորատորիաներ եւ այդպիսի հագեցվածությամբ նոր շենք տրամադրելու հարցը: Սարգսյանը՝ որպես մանկավարժ եւ կրթության ասպարեզում բարեփոխումներ անցկացնելու ու դասավանդման որակը կատարելագործող մտավորական, հստակ փաստարկներով ու որոշակի դիրքորոշմամբ է առաջնորդվում: Դրա վկայությունն են նրա գործունեության հետագա շրջաններում տպագրված հոդվածներում ու հուշերում արծարծվող այն մտքերը, ըստ որոնց նա փորձում էր ամեն կերպ իրականացնել աղագայի իր տեսլականները[8]:

Որպես մանկավարժ Արա Սարգսյանը կարեւորում էր նաեւ երիտասարդների հետ ավելի շատ ժամանակ անցկացնելու, նրանց հետ կյանքի երեւույթների, աշխատանքի, ուսման ու գեղագիտական դաստիարակության խնդիրները քննարկելու հանգամանքը, համարելով, որ այդ զրույցները յուրաքանչյուր մանկավարժի համար ոչ միայն հաճելի ու հետաքրքիր, այլեւ պարտադիր զբաղմունք են[9]:

Այս առումով շատ կարեւոր են նաեւ այն արվեստագետների հուշերը, ովքեր ուսանել են նրա մոտ եւ իրենց գրություններում վկայում են նրա հոգատարության ու մանկավարժական տաղանդի մասին: Նրանց թվում են Սարգիս Բաղդասարյանը, Արա Բեքարյանը, Լեւոն Թոքմաջյանը: Այսպես, նկարիչ Սարգիս Արուտչյանը պատմում է, թե Գեղարվեստական ինստիտուտի ստեղծման ժամանակ ինչպես էր վերջինս խորհրդակցում իր աշակերտների հետ՝ հաշվի առնելով նաեւ վերջիններիս առաջարկները, թե ում կուզենան տեսնել որպես դասախոս, ինչպես անցկացնել դասերը, որ հետաքրքիր լինեն, եւ, ինչպես հավելում է Արուտչյանը, այս զրույցների արդյունքում «օրեցօր մենք հասունանում էինք ու հոգեպես հարստանում»[10]:

Մեկ այլ աշակերտի՝ նկարչուհի Սեդա Գրիգորյանի խոսքերով, «*Արա Միհրանիչի կարգապահ, մարդասիրական վերաբերմունքը, մանկավարժական, դաստիարակչական մոտեցումը բեղմնավոր եղան: Նրա կերպարը, որպես մանկավարժի, մնաց մեր հիշողության մեջ որպես անկրկնելի երազ, որպես հեռու, անմոռաց, հարազատ մեղեդի, որը հետո մեր միջոցով պետք է փոխանցվեր սերունդներին*»[11]:

Գնահատելով Արա Սարգսյանի՝ երկար տարիների վարած արդյունավետ մանկավարժական գործունեությունը՝ 1947 թվականին նրան շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում[12]:

Ամփոփելով Արա Սարգսյանի մանկավարժական գործունեության քննարկումը՝ պետք է նշել, որ այն կարեւորվում է նախեւառաջ այն բանով, որ նա հիմ-

նադիր հանդիսացավ արվեստի կրթության այնպիսի մի օջախի, ինչպիսին է Երեւանի պետական գեղարվեստի ինստիտուտը (այժմ՝ Գեղարվեստի պետական ակադեմիա): Այդ կրթարանի շնորհիվ արվեստագետների բազում սերունդներ մասնագիտական բարձր կրթություն ստացան՝ նոր որակ ու փայլ հաղորդելով հայ արվեստի զարգացմանը: Հայ արվեստի պատմության մեջ արվեստագետ Արա Սարգսյանի ներդրումը, զուգորդվելով նրա մանկավարժական գործունեությանը, հիմք դրեց արվեստի դասավանդման ազգային ուղղությանը՝ մշակելով արվեստագիտական ունակությունների փոխանցման նոր մոտեցումներ ու մեթոդներ: Մանկավարժ Արա Սարգսյանի մի շարք գաղափարներ եւ մտահղացումներ հետագայում շարունակեցին նրա այն աշակերտներն ու հետեւորդները, որոնց համար արվեստագետ-մանկավարժի փոխանցած փորձն ու գիտելիքները արվեստի դասավանդման նրա ձեւավորած մեթոդները շարունակելու ուղեցույց դարձան:

1 Տե՛ս Ն. Ղարիբյան, Ք. Ավետիսյան, *Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիա,* Եր., 2015, էջ 46
2 Նույն տեղում:
3 Ռ. Զարյան, «Արա Սարգսյանի հիշատակին», *Սովետական արվեստ*, N 7, 1969, էջ 29-31:
4 Վ. Մկրտչյան, «Ժամանակի արվեստագետ-մանկավարժը», *Ավանգարդ*, N 3, 1983:
5 *Հուշեր Արա Սարգսյանի մասին,* Ժողովածու, խմբ.՝ Ռ. Զարյան, Եր., 1990, էջ 81:
6 Ռ. Զարյան, «Արա Սարգսյան», *Գրական թերթ*, N 4, 1992:
7 Ս. Սաֆարյան «Անկրկնելի, անմոռաց արվեստ», *Երեկոյան Երեւան,* N 4, 1972:
8 Ա. Սարգսյան, «Որոնումներ, ձգտումներ, արդյունքներ», *Սովետական Հայաստան,* N 8, 1968, էջ 9-10:
9 Ա. Սարգսյան, «Ձեզ ողջունում են, խորհուրդ տալիս», *Ավանգարդ* N7, 1964:
10 *Հուշեր Արա Սարգսյանի մասին,* էջ 15:
11 Նույն տեղում, էջ 62:
12 Վ. Հարությունյան, *Արա Սարգսյան,* Եր., 1975, էջ 31:

THE TEACHING ACTIVITY OF THE SCULPTOR ARA SARGSYAN

TATEVIK HARTENYAN
YSAFA lecturer
Giumri branch

Famous sculptor, pedagogue Ara Sargsyan who has led his own path in creative searches is considered to be a performer and an investor of culture, and cultural politics in Armenia. He aimed to research and contribute the phenomena of life in different spheres: in work, in institutional education, and in aesthetic problems. Ara Sargsyan, as a pedagogue is one of the founder pillars of Armenian Culture, who has always striven for developing the educational system. He always inspired his students with universal human values, perceiving it and using it as the main means of spreading the idealogy of humanity through the pedagogy.

ПЕДАГОГИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ СКУЛЬПТОРА АРА САРГСЯНА

ТАТЕВИК АРТЕНЯН
преподаватель ЕГАХ
филиал Гюмри

Выдающийся скульптор, прошедший огромный путь творческого поиска, Ара Саркисян является новатором в армянской культуре и культурной политике. Его творчеству присущи многослойные явления жизни, работы институционального образования, вопросы эстетического воспитания, поисков и исследований вклада. Ара Саркисян педагог - одним из основополагающих столпов армянской культуры. Учитель, который был сторонником постоянного совершенствования научных исследований и образования . выступал за реформы. Он вдохновлял своих учеников универсальными ценностями, пониманием и использованием искусства – как средства достижения высшей гуманитарной идеологии.